

զինի կամ ի ձէթ» (Ուռ. 212). եւ Միս. Գոշ կը յիշէ հայ քահանայից զրկումը ձկէն, զոր յոյն եւ վրացի եկեղեցականք կը ճաշակէին անխտիր (Առկ. 120) Լատինաց հետ միասին (Քրգ. ձմր. 603): Վերջապէս Ծործորեցին կ'ըսէ՝ թէ պահոց օր լոկ « հաց ու բանճար կու ճաշակեմ » (Ծրծ. Գ):

Ազատ՝ բայց յիշեալներէն աւելի խիստ ձեւ մը կար պահեցողութեան, զոր առաջին անգամ կը գտնենք Ս. Սահակայ Տեսւեան մէջ. հոն հայրապետս դեռ սարկաւազ, աւազ հինգշաբթի օր « հաց եւ չոշր եւ սղ » միայն կը ճաշակէ՝ իբրեւ Նիկիոյ ժողովոյն սահման (Տես. 46): Այսչոր սնունդն յատուկ էր քառասնորդաց բոլոր օրերուն, ինչպէս կը վկայէ Ստ. Սիւնեցին՝ թէ « մեր պահք սղ եւ հաց միայն է » (Թղթ. 334). Ե խոսրովիկ կը կրկնէ՝ թէ « Անլուծանելի եւ անմերձ յամենայն կերակուրս, բայց յսղ եւ ի հաց ըստ նորին անուանակոչութեան ». եւ այդ կոչումն էր աղոճացք, որ հին է եւ կայ Տեսւեան մէջ (45), Արշարունւոյն (Բ), Կիրակոսի (106) եւ այլոց քով:

Շնորհալին առ Ալեքս թղթին մէջ կը յիշէ սոյն պահոց պահպանութեան երրորդ ոճ մը: Հայ իշխաններէ եւ զինուորներէ